

**«ԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ,  
ԻՐԱԿԱՆ ՄԱՐԴԻԿ» ԱՀԿ-Ի  
ԵՈՒՍՍՅԱԿԱՅԻՆ  
ԱՍՓՈՓԱԳԻՐ**

**ԱՊՐԻԼ - ՀՈՒՆԻՍ**




**www.realwrp.org**

**2025**


**«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ  
աշխատակիցների կողմից «ՄԻԱՎ-ով ապրող  
մարդկանց խնամք և աջակցություն» ծրագրի շրջանակում  
2025թ.-ի երկրորդ եռամսյակի (ապրիլ-հունիս) ընթացքում  
տրամադրված ծառայությունների հաշվետվությունը**

Հավասարը հավասարին խորհրդատուի կողմից տրամադրված ծառայություն	<b>1364</b>
Սոցիալական աշխատողի կողմից տրամադրված ծառայություն	<b>1898</b>
Հոգեբանի կողմից տրամադրված ծառայություն	<b>130</b>
Իրավաբանի կողմից տրամադրված ծառայություն	<b>63</b>
Փոխօգնության խմբեր	<b>34</b>
ՀՌՎ դեղերի փոխանցում / ՀՀ	<b>338</b>
ՀՌՎ դեղերի փոխանցում / ՌԴ	<b>139</b>
Նախկինում ՀՌՎ բուժման դադար ունեցած և այժմ բուժմանը կցված	<b>28</b>




**«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ  
աշխատակիցների կողմից, «ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ  
վարակի կանխարգելում» ծրագրի շրջանակում 2025թ. -ի  
երկրորդ եռամսյակի (ապրիլ-հունիս) ընթացքում  
տրամադրված ծառայությունների հաշվետվությունը**

Մատուցված ծառայություններ	<b>4058</b>
Ծառայություններ ստացած անձինք	<b>3592</b>
Թեստավորում անցած անձինք	<b>1842</b>
Բացահայտված ՄԻԱՎ դրական դեպքեր	<b>4</b>
Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն ուղեգրված ՄԻԱՎ դրական դեպքեր	<b>3</b>



**«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ  
աշխատակիցների կողմից «Տուբերկուլոզ ունեցող  
անձանց խնամք և աջակցություն» ծրագրի շրջանակում  
2025թ. -ի երկրորդ եռամսյակի (ապրիլ-հունիս)  
ընթացքում տրամադրված ծառայությունների  
հաշվետվությունը**

Հավասարը հավասարին խորհրդատուի կողմից տրամադրված ծառայություն	<b>113</b>
Սոցիալական աշխատողի կողմից տրամադրված ծառայություն	<b>117</b>
Հոգեբանի կողմից տրամադրված ծառայություն	<b>7</b>
ԹԱԿ-ից և պոլիկլինիկաներից մեզ ուղեգրված անձինք	<b>104</b>
Մեր կողմից ծառայություններ ստացած անձինք	<b>124</b>



# «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ի կողմից կազմակերպված միջոցառումներ



## Մայիսի 7

Մայիսի 7-ին ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի ՈւԽ անդամները այցելեցին «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ: Գործադիր տնօրեն Նաիրուհի Սաֆարյանը ներկայացրեց ՄԻԱՎ-ի ոլորտի խնդիրներն ու առաջընթացը՝ ընդգծելով սոցիալական աշխատողների դերը: Ուսանողները նաև ծանոթացան կազմակերպության աշխատանքին ու ծրագրերին:



## Մայիսի 18

Մայիսի 18-ին ԹՈՒՄՈ-ի այգում անցկացվեց ՁԻԱՀ-ից մահացածների հիշատակին նվիրված միջոցառում: Մասնակիցները պատրաստեցին հիշատակի quilt, կազմեցին կարմիր թելից շրջան՝ որպես համերաշխության խորհրդանիշ: Մոտ 30 կամավոր անցորդներին բաժանեցին ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի վերաբերյալ տեղեկատվական նյութեր: Վերջում մոմավառությամբ հարգանքի տուրք մատուցվեց մահացածներին: Այս օրը դարձավ հիշատակի, ուժի և պայքարի խորհրդանիշ:

# Հանդիպումներ տեղական և միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև՝ մասնակցություն միջոցառումներին



## Ապրիլի 2

Ապրիլի 2-ին ՀՀ ԱՆ Կախվածությունների բուժման ազգային կենտրոնում պաշտոնական այցով գտնվող Եվրոպական Միության Թմրամիջոցների գործակալության (EUDA) ներկայացուցիչները հանդիպեցին կենտրոնի և գործընկեր կազմակերպությունների հետ: Քննարկվեցին թմրամիջոցների տարածվածության միտումները, իրականացվող բարեփոխումները և վնասի նվազեցման ծրագրերը: Կողմերը պայմանավորվեցին շարունակել արդյունավետ համագործակցությունը:

## Ապրիլի 16



Ապրիլի 16-ին Գյումրիում «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան իրականացրեց «Արի միացրո՛ւ՝ քո լույսը» և «Արի կարենք պատմության քո պատառը» միջոցառումները: Նպատակն էր բարձրացնել գենդերային բռնության վերաբերյալ իրազեկվածությունը, խթանել համերաշխությունն ու աջակցությունը բռնություն վերապրածներին: Միջոցառմանը մասնակցեցին նաև ԻԱԻՄ ՍՀԿ-ի անդամները:

# Հանդիպումներ տեղական և միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև՝ մասնակցություն միջոցառումներին



## Ապրիլի 30

Ապրիլի 30-ին կայացավ «Հակազդելով անհավասարությանը. պայքար գենդերային բռնության և խտրականության դեմ» համաժողովը, որն ամփոփեց «Կանանց և աղջիկների համար բռնությունից զերծ կյանքի» ծրագրի արդյունքները: Միջոցառմանը մասնակցեցին պետական, միջազգային կառույցների, ՔՀԿ-ների և մասնագետների ներկայացուցիչներ: Քննարկվեցին թմրամիջոցների տարածվածության միտումները, իրականացվող բարեփոխումները և վնասի նվազեցման ծրագրերը: Կողմերը պայմանավորվեցին շարունակել արդյունավետ համագործակցությունը: Միջոցառման պանելային քննարկումներից մեկին՝ որպես խոսնակ, մասնակցեց նաև ԻԱԻՄ ՍՀԿ նախագահ Ժենյա Մայիլյանը:

# ՋԼՄ-ների անդրադարձը «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ի գործունեությանն ու միջոցառումներին



## A1PLUS.AM

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ի կողմից իրականացվող «Թմրամիջոց գործածող անձանց շրջանում ՄԻԱՎ-ի կանխարգելում» ծրագրի աութրիչ աշխատակիցների համակարգող Սարգիս Ավետիսյանը A1plus-ի հյուրն էր:  
Քննարկման թեման էր՝ Հայաստանում թմրամիջոցների ապօրինի շրջանառության ծավալները և մարտահրավերները:



**«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ**

**+374 98 66 33 83**

**info@realwrp.com**

**www.realwrp.org**